ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐ ՍԱՀՄԱՆՆԵՐՆ ԱՐՑԱԽՈՒՄ

Հրապարակի վրա է «Գիտական Արցախ» պարբերականի 3-րդ համարը, որի երևան գալը օրինական ուրախության ու գոհունակության զգացումներ է հաղորդում ընթերցողին:

Ինչպես հայտնի է պարբերականի նախորդ համարներից, հիմնադիրը Երևանի պետական համալսարանն է, հրատարակիչը՝ Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորումը:

Բավականին լուրջ խմբագրական խորհուրդ ունի պարբերականը, որն զբաղվում է նյութերի ընտրության ու տպագրության երաշխավորման գործով: Պատահական չէ, որ պարբերականն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

«Գիտական Արցախ» պարբերականի խմբագրական խորհրդի նախագահը ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից-անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արամ Սիմոնյանն է: Գլխավոր խմբագիրը՝ իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ավետիք Հարությունյանն է, գլխավոր խմբագրի տեղակալը՝ բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Գորիսի պետական համալսարանի պրոռեկտոր Թեհմինա Մարությանը: Ընթերցելով պարբերականի սույն համարում զետեղված նյութերը՝ համոզվում ես, որ նրանցում քննարկված ու բացահայտված են գիտության զարգացման ժամանակակից հիմնախնդիրներ քաղաքականության, միջազգային հարաբերությունների, տնտեսագիտության, իրավագիտության, գրականագիտության, պատմության, արևելագիտության բնագավառներում: Պարբերականն ունի նաև «Երիտասարդ գիտնականի ամբիոն և «Գիտական կյանքն Արցախում» բաժիններ:

Պարբերականում զետեղված գիտական հետաքրքրություն ներկայացնող նյութերի շարքում քիչ չեն այն հոդվածները, որոնք առնչվում են Արցախում գիտամշակութային կյանքին, և որ անչափ կարևոր է, Արցախի Հանրապետության ճանաչման քաղաքական գործընթացին:

Ժամանակակից աշխարհում տեղի ունեցող քաղաքական լրջագույն հարցեր են շոշափված Գ. Բալասանյանի և Դ. Նանյանի «Թուրքիայի քաղաքականությունը Հարավային Կովկասում և չճանաչված պետությունների գործոնը», Խ. Գալստյանի «Կարգավիճակի ճանաչման և նախավիճակի (status qvo) փոփոխման հիմնահարցը արցախյան կարգավորման բանակցություններում», Դ. Դեսյաևի «Լեռնային Ղարաբաղի հակամարտությունում միջնոլորտային ֆակտորները. ռազմավարական հետաքրքրություններ և կարգավորման մոտեցումներ», Ռ. Ղևոնդյանի և Տ. Հայրապետյանի «Ադրբեջանական ագրեսիայի կանխարգելումը հասարակության սպասումների ուղղորդման միջոցով», Ե. Հայրիյանի «Հիփոթեքային վարկային շուկայի արդի իրավիճակի վերլու-

ծությունը և զարգացման հեռանկարները Արցախի Հանրապետությունում» և այլ գիտական հոդվածներ:

Ընդհանրության մեջ համարում, որի ծավալը հասնում է 470 էջի, տեղ են գտել շուրջ 43 գիտական աշխատանքներ՝ լրջագույն հիմնահարցերի լուսաբանմամբ, որոնք թելադրում են պարբերականի կարևորությունը օտարի լուծը թոթափած, ազատ, անկախ մի այնպիսի երկրում, որը հազարամյակների ընթացքում մաքառել ու գոյատևել է որպես Մայր Հայաստանի անբաժանելի, աստվածանվեր մի մաս և ազգային ինքնորոշման իրավունքով, հերոս զավակների արյան գնով կրկին մտել է հայապատկեր իր ուղին:

Սույն պարբերականի գիտական լրջությունն ու հետաքրքրությունը մեզ հուշեց հանդիպել գլխավոր խմբագիր Ավ. Հարությունյանին, շնորհավորել նրան՝ Արցախի Երիտասարդ Գիտնականների ու Մասնագետների Միավորման 5-ամյակի առթիվ ու զրուցել հետը Միավորման գործունեության մասին: Եվ անչափ գոհունակություն ապրեցինք, երբ իմացանք, որ Արցախում ակտիվ գործունեություն ծավալող հասարակական կազմակերպություններից մեկը Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորումն է՝ ԱԵԳՄՄ-ն, որը հիմնադրվել է 2015թ. հունվարի 13-ին իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ավետիք Հարությունյանի և իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Սիրանուշ Պետիկյանի նախաձեռնությամբ՝ նպատակ ունենալով միավորելու Արցախի երիտասարդ գիտնականներին ու մասնագետներին, նպաստելու նրանց գիտական ու ստեղծագործական զարգացմանը, նրանց մասնագիտական աճի համար ձևավորելու բարենպաստ մթնոլորտ, աջակցելու Արցախի երիտասարդ գիտնականների ու մասնագետների միջազգային ինտեգրմանը, ինչպես նաև Հայաստանի և Արցախի հասարակական, գիտակրթական կյանքին նրանց ակտիվ մասնակցությանը:

ԱԵԳՄՄ-ի նպատակներից մեկն էլ գիտական դիվանագիտության միջոցով Արցախի Հանրապետության միջազգային ճանաչմանը նպաստելն է, ինչպես նաև օտարերկրյա գիտնականներին իրենց երկրներում Արցախի հիմնահարցի շուրջը համախմբելը:

Ներկայումս կազմակերպությունը ընդգրկում է 39 գիտնական՝ Արցախից, Հայաստանից և Ռուսաստանից:

Առաջնորդվելով «Գիտելիքն ուժ է» կարգախոսով՝ անցած 5 տարիների ընթացքում ԱԵԳՄՄ-ի նախաձեռնությամբ իրականացվել են մոտ 4 տասնյակ գիտակրթական և ռազմահայրենասիրական ծրագրեր՝ միջազգային գիտաժողովներ, գիտական ընթերցումներ, ուսուցողական դասընթացներ, օլիմպիադաներ, մրցույթներ, կլոր սեղաններ, գրքի շնորհանդեսներ և այլն:

ԱԵԳՄՄ-ի իրականացրած ծրագրերը տարաբնույթ են և հատկանշվում են գիտական արգասիքի բազմակողմանիությամբ: Կազմակերպվել են գիտական ընթերցումներ, կլոր սեղաններ, ուսուցողական դասընթացներ, գրքի շնորհանդեսներ, ռազմահայրենասիրական ծրագրեր և այլն:

Անցած տարիների ընթացքում Կազմակերպության անդամները մասնակցել են Արցախում, Հայաստանում և նրա սահմաններից դուրս կազմակերպված միջազգային գիտաժողովների, հանդես եկել զեկուցումներով, նաև տպագրել են մի քանի տասնյակ գիտական աշխատություններ:

Կազմակերպությունը մեծապես նպաստել է Արցախում ու Հայաստանում գիտությամբ զբաղվող երիտասարդների միավորմանը, տարբեր ձևաչափերով համագործակցելուն, ինչպես նաև գիտական տեղեկատվությունների փոխանակմանը:

Կազմակերպության իրականացրած ծրագրերն ունեն միջազգային ճանաչում և կրում են շարունակական բնույթ: Այսպես, 2016 թվականից սկսած, ամեն տարի Ստեփանակերտում կազմակերպվում է միջազգային երիտասարդական գիտաժողով: Ա-

առաջին անգամ այն կրել է «ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» խորագիրը, 2017 թվականին՝ «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները», իսկ 2018 թվականից անցկացվում է «Հայոց պետականության անցյալը, ներկան և ապագան» խորագրով: 4 միջազգային գիտաժողովներին մասնակցել են աշխարհի 10 երկրների՝ ԱՄՆ-ի, Բելառուսի, Գերմանիայի, Լեհաստանի, Հարավային Օսեթիայի, Ռուսաստանի, Ուկրաինայի, Ֆրանսիայի, Հայաստանի և Արցախի շուրջ 360 անվանի ու երիտասարդ հետազոտողներ:

Հերթական՝ 5-րդ՝ հոբելյանական գիտաժողովը ԱԵԳՄՄ-ի հիմնադրման 5-ամյակի առթիվ կազմակերպվելու է 2020թ. սեպտեմբերի 24-27-ը Ստեփանակերտում:

Գիտաժողովը նպատակ ունի քննարկել և ներկայացնել Հայոց պետականության հատկապես վերջին հարյուրամյակի խնդիրները, ձեռքբերման ուղիների քննարկումն ու հրատապ անելիքները, որոնք կնպաստեն հայոց պետականության ամրապնդմանը, զարգացմանն ու հզորացմանը: Գիտաժողովի շրջանակներում կքննարկվեն նաև տարածաշրջանային կարևոր նշանակություն ունեցող հիմնախնդիրներ:

Գիտաժողովի հիմնահարցերից մեկն Արցախի գիտության զարգացումն է: Կազմակերպության կողմից հիմնադրվել են «Արցախի գիտության դեսպան», «Արցախի գիտության մեկենաս» կոչումներ ու համանուն մեդալներ:

«Արցախի գիտության դեսպան» կոչում և մեդալ շնորհվում է այն անձանց, ովքեր նշանակալի ավանդ ունեն գիտական հետազոտությունների, գյուտերի, գիտության, դիվանագիտության զարգացման ու տարածման միջոցով Արցախն աշխարհին ճանաչելի դարձնելու գործում, ինչպես նաև այլ ակնառու ծառայությունների համար՝ ի նպաստ ղարաբաղյան հակամարտության խաղաղ ու արդարացի կարգավորման և Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման: 2019թ. սեպտեմբերի 14-ին միջազգային գիտաժողովի շրջանակներում «Արցախի գիտության դեսպան» կոչումով ու ոսկեզօծ մեդալով պարգևատրվել են գերմանացի հայտնի պրոֆեսոր Օտտո Լուխտերհանդտը և լեհ պրոֆեսոր Մարեկ Ժեյմոն:

«Արցախի գիտության մեկենաս» կոչում և մեդալ շնորհվում է Կազմակերպության նախագծերի իրականացմանն աջակցող, Արցախում գիտության զարգացմանն ու գիտատեխնիկական առաջընթացին նպաստող, գիտության բնագավառում ակնառու բարեգործություններ կատարող անձանց:

ԱԵՄՄԳ-ն մշտապես գտնվում է երկրի ղեկավարության ուշադրության կենտրոնում: Գիտաժողովներին մասնակցում, ուղերձներ են հղում Արցախի Հանրապետության, Ազգային ժողովի նախագահները: Հանդիպումներ են կազմակերպվում պետական այրերի հետ:

Խրախուսելի երևույթ է Արցախի էլեկտրոնային գրադարանի (ԱԷԳ)-ի ստեղծումը: 2018 թվականից գործում է www.artsakhlib.am հասցեով «Արցախի էլեկտրոնային գրադարան» կայքը, որի շնորհանդեսը տեղի է ունեցել 2018թ. մայիսի 17-ին: Արցախի էլեկտրոնային գրադարանի (ԱԷԳ) ստեղծման նպատակն է մեկտեղել Արցախի ու Հայաստանի մասին ամբողջ գիտական, ճանաչողական ու գեղարվեստական գրականությունը, այն դարձնել Արցախի վերաբերյալ օբյեկտիվ տեղեկատվություն ստանալու աղբյուր, խթանել Արցախում հետազոտությունների իրականացումը, ինչպես նաև ժխտել ղարաբաղյան հակամարտության, պետականության կերտման ու տարբեր իրողությունների վերաբերյալ խեղաթյուրող նկրտումները:

2020 թվականի փետրվարի 1-ի դրությամբ կայքում առկա է ավելի քան 3.000 հեղինակների 6.200 նյութ: Աշխարհի 100 երկրների 50.000 այցելուների կողմից կայքի թեմատիկ էջերն առայսօր դիտվել են 200.000 անգամ, որը լավ ցուցանիշ է նորաստեղծ էլեկտրոնային գրադարանի համար: Կայքի առավելություններից մեկն էլ այն է, որ գրականության ներբեռնումն ԱՆՎՃԱՐ է: Կայքի անվճար լինելը խթանում է ընթերցա-

նությունը, նպաստում հայոց հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտությունների իրականացմանը և կատարում գիտությամբ զբաղվելու քարոզչություն: Կայքի համալրման կարևորագույն սկզբունքը անընդհատությունն է, ինչպես նաև հավաքածուի համալրման աղբյուրներ դարձնելը:

2019 թվականի նոյեմբերին «Արցախի էլեկտրոնային գրադարան» կայքի հանրայնացման նպատակով շնորհանդեսներ են կազմակերպվել Հայաստանի և Արցախի Հանրապետությունների բուհերում, Արցախի շրջկենտրոններում՝ շրջանների դպրոցների ներկայացուցիչների ներգրավմամբ: Հաճելի է նշել, որ այդ միջոցառումներին մասնակցել են 2.000-ից ավելի շահակիցներ:

Նման արդյունավետ ծրագրերի իրականացմամբ Կազմակերպությունն իր համեստ նպաստն է բերում գիտության երիտասարդացման ու զարգացման գործին: ԱԵԳՄՄ-ն համագործակցության հուշագրեր է կնքել ինչպես արցախյան, այնպես էլ հայաստանյան ու օտարերկրյա գիտակրթական կառույցների ու ՁԼՄ-ների, մասնավորապես Երևանի պետական համալսարանի, Ստեփանակերտի «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի, «Նաշա սրեդա օնլայն» կայքի, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի, Գորիսի ու Գավառի պետական համալսարանների, Զ. Վանեևի անվան հարավօսական գիտահետազոտական ինստիտուտի և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հետ:

Տարբեր նախագծերի շրջանակներում Կազմակերպությունը համագործակցում է Արցախի և Հայաստանի բուհերի հետ: Միավորումն ունի նվիրյալ աջակիցներ:

ԱԵԳՄՄ-ի նախագծերի իրականացմանը տարբեր տարիներ աջակցել են պետական կառույցներ, մասնավոր ընկերություններ, ինչպես նաև անհատ բարերարներ, որոնցից են Արցախի Հանրապետության կառավարությունը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, Հայաստանի երիտասարդական հիմնադրամը, «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը», «Վալլեքս Գարդեն հոթելը», «Ղարաբաղ Տելեկոմը», «Բեյզ Մեթըլսը», «Արցախբանկ» փակ բաժնետիրական ընկերությունը, բարերարներ Գաբրիել Չեմբերջյանը, Կարեն Սարգսյանը և այլոք:

Սահմանվել են նաև մրցանակներ երկու տարի անընդմեջ (2017թ. փետրվարի 24-ին և 2018թ. փետրվարի 28-ին): Կազմակերպությունը Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կողմից արժանացել է «Հայկյան-2016» և «Հայկյան-2017» մրցանակների «Լավագույն երիտասարդական հասարակական կազմակերպություն մարզում» անվանակարգում:

Զրույցի վերջում ԱԵԳՄՄ-ի հիմնադիր, պարբերականի խմբագիր Ավ. Հարությունյանը նշեց. «Ամփոփելով Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման հնգամյա բազմաբնույթ ու արդյունավետ գործունեությունը՝ վստահաբար կարող ենք արձանագրել, որ ԱԵԳՄՄ-ն ուրույն հետագիծ է թողնում Արցախի Հանրապետության հասարակական ու գիտական կյանքում և նույն եռանդով շարունակելու է իր նպատակամետ ընթացքը՝ իրականացնելու կազմակերպության կողմից կանխամտածված բոլոր այն ծրագրերը, որոնք կնպաստեն Արցախի գիտության զարգացմանն ու միջազգային ճանաչմանը»: Նա նաև ավելացրեց, որ ԱԵԳՄՄ-ի կողմից 2020թ. փետրվարի 20-ին հիմնադրվել է «Արցախ» գիտահետազոտական ինստիտուտը՝ նպատակ ունենալով ավելի զարգացնել գիտությունն Արցախում, գիտության դիվանագիտության միջոցով նպաստել Արցախի Հանրապետության միջազգային ճանաչմանը:

Սոկրատ Խանյան
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ